Կարգապահական գործ թիվ ԿԳ-17135

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի մայիսի 15-ի թիվ 109-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/83-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՆԻԿՈԼԱՅ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Հրանտ Անանյանի, Խորհրդի անդամներ՝ Հարություն Հարությունյանի, Սեդրակ Ասատրյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Մելանյա Առուստամյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանին (արտոնագիր թիվ 95) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Բեկթաշկանը **(այսուհետ նաև՝ Դիմող կամ Դատարան)**, դիմելով Պալատ, հայտնել է, որ ԵԿԴ/0295/01/16 քրեական գործով տուժողի ներկայացուցիչ, փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանը, նույն քրեական գործով նշանակված դատական նիստերի ընթացքում բազմիցս խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքը և չի ենթարկվել դատավորի օրինական կարգադրություններին, որով Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք է դրսևորել, իսկ 2017 թվականի սեպտեմբերի 27-ի դատական նիստի ժամանակ Դատարանը փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանի նկատմամբ կիրառել է սանկցիա՝ նախազգուշացում, որից հետո փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանը շարունակել է խոչընդոտել դատական նիստի բնականոն ընթացքը:Դատարանը 27.09.2017թ. կայացրել է դատական սանկցիա կիրառելու մասին որոշում:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 25.10.2017թ. թիվ 354-Ա/ԿԳ-17135 որոշմամբ փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանի նկատմամբ հարուցվել է

կարգապահական վարույթ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ նաև Կանոնագիրք) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործը 27.10.2017թ. հանձնվել է Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձ (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**), փաստաբան Մարինե Թովմասյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում, ինչպես նաև խորհրդի կողմից քննության ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել: Դիմողը ներկայացրել է թիվ ԵԿԴ/0295/01/16 քրեական գործով դատական նիստերի ձայնագրառման լազերային կրիչի օրինակը:

Դիմողը Խորհրդի նիստին չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում, ինչպես նաև խորհրդի կողմից քննության ընթացքում Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել:

Պատասխանողը Խորհրդի նիստին չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

Նախապատրաստող Մարինե Թովմասյանը 25.12.2017թ. կազմել է եզրակացություն, որի համաձայն 27.09.2017թ. դատական նիստում փաստաբանի և դատավորի միջև տեղի է ունեցել լեզվակռիվ, միմյանց դիմել են «դու»-ով, որի ընթացքում դատավորը պահանջել է նաև որպեսզի փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանը դուրս գա դատական նիստերի դահլիճից: Այնուհետև՝ հայտարարվել է 5 րոպե ընդմիջում, որպեսզի փաստաբանը հեռանա դատական նիստերի դահլիճից, իսկ ընդմիջումից հետո դատավորը, վերադառնալով նիստերի դահլիճ, անդրադարձել է փաստաբանի վարքագծին և հեռացել խորհրդակցական սենյակ որոշում կայացնելու: Նախապատրաստողը նշել է նաև, որ փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանի վարքագիծը գնահատելիս պետք է այն գնահատել դատավոր Ա.Բեկթաշյանի կողմից դրսևորված վարքագծի, ներկայացրած պահանջների համատեքստում:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 27.12.2017թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 15.05.2018թ., ժամը՝ 19:10-ին[1], Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

***Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը,* հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

1. Փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանը թիվ ԵԿԴ/0295/01/16 քրեական գործով հանդիսացել է տուժողի ներկայացուցիչ:
2. Թիվ ԵԿԴ/0295/01/16 քրեական գործով 2017 թվականի սեպտեմբերի 27-ի դատական նիստի ժամանակ Դատարանը փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանի նկատմամբ կիրառել է սանկցիա՝ նախազգուշացում, որից հետո տուժողի ցուցմունք տալու ժամանակ, փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանը հայտնում է, որ տուժողը չստորագարեց, որին Դատավորը պատասխանում է, ասելով, որ չստորագրեց հետո կստորագրի, Դատարանին չընդհատեն: Այնուհետև, Դատավորի և Պատասխանողի խոսակցությունը շարունակվում է, որից հետո Դատավորը Նիկոլայ Բաղդասարյանին բարձր ձայնով հորդորում է դուրս գալ դատական նիստերի դահլիճից, վերջինս դուրս չի գալիս և Դատավորը հեռանում է խորհրդակցական սենյակ դատական սանկցիա կիրառելու մասին որոշում կայացնելու:

Նշված փաստերը հաստատվում են 27.09.2017թ. դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ, դատական նիստի ձայնագրառման կրիչով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանի (արտոնագիր 95, ստացված՝ 19.06.1998թ.) նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական գործի):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանի

---

[1] Խորհրդի նիստը նշանակված է եղել 15.05.2018թ., ժամը՝ 18:30-ին, սակայն սկսվել է 19:10-ին: Նիստը ուշ սկսելու մասին նախապես տեղեկացվել են կողմերը հեռախոսազանգի միջոցով:

նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև,* ***պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին:*** *Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետմիաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Այս կանոնը վկայակոչող է և հղում է պարունակում փաստաբանի և դատարանի հարաբերությունները կարգավորվող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ *պաշտպանը պարտավոր է ենթարկվել (...) դատական նիստը նախագահողի իրավաչափ կարգադրություններին, դատական նիստում պահպանել կարգուկանոն:*

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից հետևում է, որ Կանոնագիրքը և քրեադատավարական օրենսդրությունը փաստաբանի համար սահմանել են դատարանում սահմանված վարվելակերպի կանոններին ենթարկվելու, դատավորին հարգանքով վերաբերվելու, դատական նիստը նախագահողի իրավաչափ կարգադրություններին ենթարկվելու, դատական նիստում կարգուկանոն պահպանելու պարտականություն: Միևնույն ժամանակ փաստաբանի սույն պարտականությունը որևէ կերպ չպետք է կաշկանդի փաստաբանին իր վստահորդի շահերն անվախ պաշտպանելու հարցում՝ ընդհուպ մինչև հաշվի չառնելով սեփական շահերը կամ իր նկատմամբ ցանկացած հետևանք, որը կարող է ծագել նաև դատավորի գործողությունների հետևանքով: Այսինքն՝ փաստաբանի պարտականությունը ենթարկվել դատավորի կարգադրություններին գործում է այնքան ժամանակ և այն դեպքերում, երբ դատական նիստը նախագահողի կարգադրությունները կրում են օրինական բնույթ, նպատակամղված են արդարադատության պատշաճ և արդյունավետ իրացմանը և չեն հանգեցնում փաստաբանի՝ որպես իրավապաշտպան գործառույթ իրականացնող անձի և դատավարության առանցքային մասնակցի իրավունքների և օրինական շահերի նսեմացմանը կամ խախտմանը:

Հետևաբար, Խորհուրդը հիշեցնում է, որ փաստաբանի պարտականությունը ենթարկվել դատարանում գործող վարվելակերպի կանոններին, որը նախատեսված է Կանոնագրքի 4.1 կետով, վերաբերում է նախագահող դատավորի օրինական կարգադրություններին ենթարկվելու և դատավարության սահմանված օրինական կարգը պահպանելուն: Կանոնագրքի 4.1 կետի խախտում չի կարող հանդիսանալ նախագահող դատավորի ոչ իրավաչափ և չհիմնավորված գործողությունների դեմ

առարկելը, դատավորի կողմից արված ոչ կոռեկտ արտահայտություններին արձագանքելը:

Խորհուրդը եզրակացնում է, որ սույն պարագայում նախագահող դատավորի գործողությունները չեն բխել ՔԴՕ-ից կամ որևէ այլ իրավական ակտից, չեն եղել հիմնավորված և ուղղված չեն եղել արդարադատության պատշաճ և արդյունավետ իրացմանը: Այս պայմաններում, Պալատի խորհուրդը հաստատված չի համարում այն հանգամանքը, որ նախագահող դատավորի գործողություններին փաստաբանի արձագանքելը հակասում է Կանոնագրքի 4.1 կետի պահանջին:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի վարքագծում առկա չեն Կանոնագրքի 4.1 ենթակետի խախտման հատկանիշներ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 25.10.2017թ. թիվ 354-Ա/ԿԳ-17135 որոշմամբ փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանի (արտոնագիր թիվ 95) նկատմամբ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտում թույլ տալու հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Հրանտ Անանյան

15 մայիսի 2018թ.
թիվ ԿԳ/83-Ա
ք. Երևան